

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝
 ք. Վանաձոր

Տարածաշրջանները՝
 Սպիտակ,
 Ստեփանավան,
 Տաշիր,
 Թումանյան,
 Գուգարք

Քաղաքները՝
 Վանաձոր,
 Ալավերդի,
 Ստեփանավան,
 Սպիտակ
 Տաշիր,
 Ախթալա,
 Թումանյան,
 Շամլուղ

Տարածքը	3 799 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	12.8 %
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Քաղաքներ	8
Գյուղեր	122
Բնակչության թվաքանակը 2013թ. տարեվերջին	230.8 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	135.5 հազ. մարդ
գյուղական	95.3 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2013թ.	7.6%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	58.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	251 153.7 հա
այդ թվում՝ վարելահողեր	42 074.8 հա

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3 101 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը *գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:*

Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի *արտադրությունները:*

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճուպանուղի):

2013թ. *մարզի տնտեսության* հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 6.1 %,
- գյուղատնտեսություն՝ 7.3 %,
- շինարարություն՝ 8.3 %,
- մանրածախ առևտուր՝ 1.6 %,
- ծառայություններ՝ 1.6 %:

Վանաձոր քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 84.3 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշ ընդհատումներով գործում է քաղաքի *քիմիական համալիրը:* Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Մայիտակ քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 12.9 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 95 կմ է) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 95 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1 400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին:

Մայիտակ քաղաքը մինչև 1988թ. *արդյունաբերական* կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական որոշ կազմակերպություններ, բնակչության հիմնական մասն զբաղվածությունն է գտնում գյուղատնտեսության ոլորտում:

Ստեփանավան քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 13.0 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1 666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1 375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Տաշիր քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 7.7 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.՝ որպես ռուսական արտորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան - Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են **կաթի վերամշակմամբ** զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Ալավերդի քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 13.2 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:


Ախթալա քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 2.1 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

Թումանյան քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 1.6 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Շամշուղ քաղաքը (2013թ. տարեվերջին՝ 0.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ,
2014թ. հունվարի 1-ի դրությամբ**

%



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը այդ թվում՝	1 184	1 142	1 145	1 103	1 046
խանութներ	366	323	318	315	297
կրպակներ	749	750	757	721	691
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	4	3	3	3	3
առևտրի այլ օբյեկտներ	63	64	65	62	53

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Պետական նախադպրոցական	55	57	59	61	66
Պետական հանրակրթական	167	167	167	167	167
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	22	22	21	22	22
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	4	4	4	4	4

¹ Այստեղ և հետագայում՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Պետական միջին մասնագիտական ուսումնական	9	9	8	8	8
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	2	2
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	1	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Վանաձոր	ք. Վանաձոր	84 298
Ալավերդի	ք. Ալավերդի	13 830
	գ. Ակներ	
Ստեփանավան	ք. Ստեփանավան	13 338
	գ. Արմանիս	
Սպիտակ	ք. Սպիտակ	12 913
Տաշիր	ք. Տաշիր	7 653
Ախթալա	ք. Ախթալա	2 087
	գ. Առողջարանին կից	
Թումանյան	ք. Թումանյան	1 696
	գ. Քոբեր կայարանի	
Շամլուղ	ք. Շամլուղ	756
	գ. Ախթալա	
	գ. Բենդիկ	

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագարակ		1 222
2	Ազնվաձոր		434
3	Աթան		218
4	Ահնիձոր		199
5	Ամրակից		563
6	Այգեհատ		217
7	Անտառամուտ		301
8	Անտառաշեն		248
9	Ապավեն		128
10	Արդվի		190
11	Արծնի		295
12	Արջուտ	•Արջուտ •Արջուտ կայարանին կից	1 347
13	Արևածագ		749
14	Արևաշող		2 699
15	Աքորի		2 687
16	Բագում		1 361
17	Բլագոդարնոյե		219
18	Բովաձոր		297

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
19	Գարգառ		1 336
20	Գեղասար		955
21	Գյուլագարակ		2 470
22	Գոգարան		1 302
23	Գուգարք		6 589
24	Դաշտաղեն		111
25	Դարպաս		2 021
26	Դեբետ		826
27	Դսեղ		2 272
28	Եղեգնուտ		860
29	Թեղուտ		750
30	Լեջան		971
31	Լեռնահովիտ		1 256
32	Լեռնանցք		1 475
33	Լեռնապատ		2 302
34	Լեռնավան		1 595
35	Լերմոնտովո		1 011
36	Լոռի բերդ		403
37	Լորուտ		1 026
38	Լուսաղբյուր		1 071
39	Խնկոյան		357
40	Ծաթեր		356
41	Ծաղկաբեր		1 427
42	Ծաղկաշատ		212
43	Կաթնաղբյուր		950
44	Կաթնաջուր		1 980
45	Կաթնառատ		1 043
46	Կաճաճկուտ		374
47	Կարմիր Աղեկ		145
48	Կողես		393
49	Կուրթան		1 625
50	Հագվի		504
51	Հալավար	• Հալավար • Գյուլլուդարա • Հադարլի • Քիլիսա	138
52	Հաղպատ		770
53	Հարթագյուղ		1 373
54	Հոբարձի		839
55	Հովնանաձոր		64
56	Չյունաշող		1 50
57	Չորագետ		262
58	Չորագյուղ		240
59	Չորամուտ	• Չորամուտ • Գոգավան	352
60	Ղուրսալ		540
61	Ճոճկան		2 125
62	Մարգահովիտ		3 857
63	Մարց		568
64	Մեղովկա	• Մեղովկա • Կրուզլայա շիշկա	445
65	Մեծ Այրում	• Մեծ Այրում • Փոքր Այրում	1 176
66	Մեծավան		5 736
67	Մեծ Պարնի		2 106

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
68	Մեղվահովիտ	• Մեղվահովիտ • Նորամուտ	241
69	Միխայելովկա		795
70	Մղարթ		445
71	Յաղդան		75
72	Նեղոց		337
73	Նովոսելցովո		205
74	Նորաշեն		1 255
75	Նոր Խաչակապ		676
76	Շահումյան		3 019
77	Շամուտ		210
78	Շենավան		507
79	Շիրակամուտ		2 490
80	Շնող		3 122
81	Չկալով		216
82	Պաղաղբլուր		130
83	Պետրովկա		180
84	Պրիվոլնոյե		1 050
85	Պուշկինո		261
86	Ջիլիգա		104
87	Ջրաշեն		3 665
88	Սարայանջ		186
89	Սարահարթ		1 444
90	Սարամեջ		1 798
91	Սարատովկա	• Սարատովկա • Գետավան	425
92	Սարչապետ		2 158
93	Սվերդլով		1 063
94	Վահագնաձոր		318
95	Վահագնի		1 154
96	Վարդաբլուր		1 308
97	Ուրուտ		990
98	Ուրասար		409
99	Փամբակ	• Փամբակ • Փամբակ կայարանին կից	375
100	Քարաբերդ		82
101	Քարաձոր		456
102	Քարինջ		649
103	Քարկոփ		405
104	Օձուն	• Օձուն • Ամոջ	5 331
105	Ֆիոլետովո		1 317

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2013թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 283	4 717
Ծնվածներ, մարդ	136	64	72
Մահացածներ, մարդ	121	59	62
Ամուսնություններ	57	X	X
Ամուսնալուծություններ	20	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	39.4	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	185	89	96
հանրակրթական	1 292	629	663
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	98	68	30
նախնական մասնագիտական (արհեստագործական)	24	3	21
միջին մասնագիտական	91	52	39
բարձրագույն մասնագիտական	155	93	62
Առողջապահության ոլորտ՝			
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	36 818
Մարզիկներ, մարդ	159	24	135
Զբաղվածներ, մարդ	4 551	2 405	2 146
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	160	137	23
բժիշկներ	21
միջին բուժանձնակազմ	52
Գործազուրկներ, մարդ	1 081	639	442
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2 197
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	915	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	22 182
թատրոն	1 053
համերգ	1 269
թանգարան	995
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	52	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	28	X	X
միջին ծանրության	18	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: